ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«12» դեկտեմբերի 2014 թվականի N 192 –Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով և հիմք ընդունելով Գյումրի համայնքի ղեկավարի 2012 թվականի նոյեմբերի 02-ի <<Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող ակտիվների և պարտավորությունների ամենամյա գույքագրում կատարելու մասին>> N 27 կարգադրությամբ ստեղծված գույքագրման հանձնաժողովների ուսումնասիրությունների արդյունքների վերաբերյալ կազմած փաստաթղթերը՝ **համայնքի ավագանին որոշում է**.

1.Թույլատրել ֆինանսատնտեսագիտական բաժնին.

1)համայնքի հաշվեկշիռ մուտքագրել Գյումրի համայնքի սեփականությունը հանդիսացող հիմնական միջոցները ՝ համաձայն N 1 հավելվածի,

2)համայնքի հաշվեկշռից դուրս գրելու օտարված, նվիրատվությամբ տրված հիմնական միջոցները՝ համաձայն N2 հավելվածի:

2. Հաստատել Գյումրի համայնքի հաշվեկշռում գտնվող, սակայն ուսումնասիրությունների արդյունքում չպարզված հիմնական միջոցների ցանկը՝ համաձայն N 3 հավելվածի:

3. Գյումրի համայնքի հաշվեկշռում գտնվող չպարզված հիմնական միջոցների հետագա կարգավիճակը պարզելու նպատակով հանձնարարել քաղաքապետարանի համապատասխան բաժիններին կազմակերպել և իրականացնել լրացուցիչ ուսումնասիրություններ և արդյունքները ներկայացնել ավագանու քննարկմանը և հաստատմանը:

Կողմ (17)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ(0)**
Գ. Ադամյան _____		
Ա. Բաղեյան _____		
Ա. Բաղրամյան _____		
Լ.Բարսեղյան _____		
Ա.Գրիգորյան _____		
Վ.Եդիգարյան _____		
Գ.Թաթարյան _____		
Հ. Կարապետյան _____		
Տ.Հովհաննիսյան _____		

Վ. Հունանյան _____

Ն. Մեսրոպյան _____

Ռ.Մխիթարյան _____

Է. Մկրտչյան _____

Վ.Շիրինյան _____

Ե. Պողոսյան _____

Մ. Սահակյան _____

Տ. Փանոսյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

ք.Գյումրի
«12» դեկտեմբերի 2014 թ.